ԱՆԻՈՒՄ 1892 Թ. ՊԵՂՎԱԾ ԲԱԽՏԱՂԵԿԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ[1]

ԶԱՐՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ
արվեստ. թեկնածու
Երևանի պետական համալսարան
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա
hakobyanzaruhy@ysu.am

ԴԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
արվեստաբան
Հայաստանի պատմության թանգարան
dianagrigoryan73@gmail.com

ՀՏԴ՝ 730; 73.03
DOI: 10.54503/1829-4278.2024.2-36

Ամփոփագիր

Հոդվածում քննված են Անիի հնագիտական պեղումների առաջին շրջանում (1892 թ.) բացված Բախտաղեկի (ս. Գրիգոր կամ Խաչուտի) եկեղեցու քանդակազարդ դրվագները, որոնք եղել են եկեղեցու արտաքին հարդարանքի «Դրախտային այգու» հատվածները: Եկեղեցու քանդակազարդ բեկորների մի մասն անհետացել է 1894–1904 թթ. ընթացքում, իսկ մնացածը՝ ոչնչացվել է 1918 թ. Անի ներխուժած թուրքական զորքերի կողմից: Բախտաղեկի եկեղեցուն վերաբերող նյութերից այսօր հասանելի են արշավախմբի արած լուսանկարները, որոնք պահվում են տարբեր արխիվներում, ինչպես նաև Ն. Մառի և Հ. Օրբելու արած նկարագրությունները և մի քանի հակիրճ հոդված: Ժամանակին փաստագրված և նկարագրված բեկորներն այսօր մեծ արժեք ունեն: Բախտաղեկի եկեղեցու և մանավանդ նրա քանդակազարդ արտաքին գոտու վերակազմությունը նոր իմաստ և նշանակություն է ստանում մեր օրերում, քանի որ հարդարման այդ ոճը բնութագրում է Անիի՝ 13-րդ դարի սկզբի մի խումբ եկեղեցիների (Տիգրան Հոնենց, Աղջկաբերդ և Կուսանաց) արտաքին ձևավորման սկզբունքները, որն առանձնահատուկ էր միայն Անիի դպրոցին:

Բանալի բառեր. Անի, Բախտաղեկ, Խաչուտ, Ս. Գրիգոր, Զաքարյաններ, «գեղաքանդակ ոճ», Հովսեփ Օրբելի, Նիկողայոս Մառ

1 Նյութն ընթերցվել է ակադեմիկոս Հովսեփ Օրբելու 135-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովին՝ 30.10.2022 թ., Ծաղկաձոր:

Ներածություն

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի գիտական ուսումնասիրության հիմքը դրվել է 1892–1893 թթ., երբ Ն. Մառի գլխավորությամբ իրականացվեցին հնագիտական պեղումներ, որոնք շարունակվեցին մինչև 1917 թ.:

1892–1893 թթ. բացվել են մի շարք լիովին ավերված, բայց շատ ուշագրավ եկեղեցիների հիմքեր, որոնց մասին նաև այսօր հիշատակումները թռուցիկ են կամ պարզապես շրջանցվում են՝ տվյալների պակասության պատճառով: Այս համատեքստում կարևոր են արշավախմբի անփոխարինելի անդամներից մեկի՝ Հ. Օրբելու հաղորդած տեղեկությունները: Անիի թանգարանի (հնադարանի) տնօրինումը հնարավորություն էր ընձեռել նրան՝ կազմելու այնտեղ պահվող նյութերի գիտական ցանկը, ինչպես նաև հեղինակելու քաղաքի ուղեցույցն ու «Անիի ավերակները» գրքույկը[2]: Մեծ գիտնականի և փորձառու արևելագետի կատարած՝ հուշարձանների և դրանց առանձին դրվագների նկարագրություններն ու հաղորդած տեղեկությունները, որոնք այսօր գիտական մեծ արժեք են ներկայացնում, հնարավորություն են տալիս ավելի հստակ պատկերացում կազմելու չպահպանված հուշարձանների մասին: Դրանց շարքում է 1892 թ. պեղված Բախտաղեկի (Ս. Գրիգոր կամ Խաչուտի[3]) եկեղեցին

2 *Краткий путеводитель по городищу Ани,* Анийская серия № 4 (сост. И. А. Орбели), Санкт-Петербург: Типография Императорской академии наук, 1910; *Каталог Анийского музея древностей,* вып. 1, Анийская серия № 3 (сост. И. А. Орбели), Санкт-Петербург: Типография Императорской академии наук, 1910.

3 Եկեղեցու վերաբերյալ պատմական տեղեկությունները բացակայում են: Պեղումներից հայտնաբերվել են 2 ամբողջական արձանագրություններ և առանձին հատվածներ: Առաջին ամբողջական արձանագրությունն արված է եղել արտաքին երեսպատման 4 քարերի վրա և կրել է նվիրատվական բնույթ (տե՛ս **Марр Н. Я.,** Новые материалы по армянской эпиграфике, *Записки Восточного Отделения Императорского Русского Археологического Общества*, т. 8, 1894, с. 74–76): Ն. Մառը ստեղծման թվականն ընթերցել է 1271 թ., սակայն չի բացառել, որ այն 1251 թ. լինի: Ուռուցիկ և զարդագիր 2-րդ արձանագրությունը բացվել է *in situ* բեմի հատվածի պեղումների ժամանակ, ստեղծման տարեթիվն անհայտ է (*ԴՀՎ*, պրակ 1, Անի քաղաք (կազմ.՝ Հ. Ա. Օրբելի), Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1966, էջ 61; **Марр Н. Я.**, *Ани. Книжная история города и раскопки на месте городища* (переизданное), Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, 2011, табл. XVII, илл. 52): Խաչուտ քահանայի՝ հիշատակային բնույթի այս արձանագրության մեջ թվարկված անձանց շարքում հիշվում էր նաև Բախտաղեկ իգական անունը: Հստակ տեղեկությունների բացակայության պայմաններում առաջին հետազոտողները օգտագործել են եկեղեցու անվան «Ս. Գրիգոր» տարբերակը, քանի որ այն հիշատակվում է նվիրատվական արձանագրության մեջ: Եկեղեցու՝ Բախտաղեկ և Խաչուտ անվանումները մասնագիտական գրականության մեջ հայտնվում են ավելի ուշ, ամենայն հավանականությամբ, այս եկեղեցին մյուս՝ Ս. Գրիգորին նվիրված եկեղեցիներից տարբերելու համար: Սույն հոդվածում

(նկ. 1), որից այսօր տեղում մնացել է միայն մի քանի բեկոր[4] (նկ. 2): Նրա արտաքին և ներքին հարդարանքի մասնակի վերակազմության համար կարևոր են պահպանված արխիվային լուսանկարները[5] և եկեղեցուն վերաբերող նկարագրությունները: Առ այսօր տպագրված նյութերից կարևորում ենք ինչպես Հ. Օրբելու, այնպես էլ Ն. Մառի նկարագրություն-ները, վերջինիս չհրատարակված օրագրի հիման վրա նրա կրտսեր գործընկերների՝ Ն. Սիչովի և Կ. Լեոնտևի հրատարակած հոդվածները[6]: Եկեղեցու բացված հիմքերի և դրա արդյունքում ի հայտ եկած 46 քան-դակազարդ խոշոր բեկորների հիման վրա Թ. Թորամանյանն առաջինն է վերակազմել հարավային ու արևմտյան ճակատները (նկ. 3), որն էլ մեզ համար ելակետային է:

Եկեղեցու ընդհանուր նկարագրությունը

Բախտաղեկի եկեղեցին գտնվել է Գագկաշեն (Ս. Գրիգոր) եկեղե-ցուց հյուսիս-արևելք՝ միջնաբերդից հյուսիս, Կարուց դռնից՝ 150 մ հա-րավ-արևմուտք: Կառույցը պատկանել է ուղղանկյուն հատակագծով (արտաքուստ հաստ պատերով), զույգ որմնամույթերով գմբեթավոր սրահ տիպին (նկ. 4): Մեծ խորություն ունեցող կիսաշրջան ավագ խո-րանին հյուսիսից և հարավից կից եղել են ուղղանկյուն հատակագծով ավանդատներ՝ արևելյան կողմում մեկական փոքրիկ կիսաշրջան խորաններով: Ավանդատների մուտքերը բացվել են դեպի աղոթաս-րահը: Գմբեթակիր որմնամույթերից արևելյան զույգը հատակագը-

---

օգտագործվում է «Բախտաղեկ» պայմանական անունը:

4 **Կարապետյան Ս.**, Անի 1050, Երևան, «Բյուրակն» տպարան, 2011, էջ 173, նկ. 443:

5 Եկեղեցու արխիվային լուսանկարների մեծ մասը դեռևս հրատարակված չէ ամբողջությամբ: Ն. Մառի արած լուսանկարները (մոտ 70 միավոր) պեղումների օրագրի հետ միասին պահվում են նրա անձնական արխիվում՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նյութական մշակույթի պատմության ինստիտուտում (**Медведева М. В.,** Армения в работах предшественников К. Х. Кушнаревой: судьба архива академика Н. Я. Марра, *Записки Институт истории материальной культуры Российской академии наук,* № 27, 2022, с. 28–30): Սույն հոդվածի շրջանակում օգտվել ենք կայքում տեղադրված լուսանկարներից, հոդվածներում հրատարակած նյութերից, ինչպես նաև Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի (ՀՃՈՒՀ) արխիվից: Հատկանշական է, որ եկեղեցու բեկորների՝ ՀՃՈՒՀ արխիվային լուսանկարները, որոնք արտացոլում են դրանց վիճակը 1904 թ. դրությամբ, ցույց են տալիս տարիների ընթացքում կրած փոփոխությունները՝ համեմատած Ն. Մառի՝ պեղումներից անմիջապես հետո արած լուսանկարների հետ:

6 **Сычев Н. П.,** Анийская церковь, раскопанная в 1892 г., *Христианский Восток*, том 1, вып. 2, 1912, с. 212–219; **Леонтьев К. А.,** Развалины города Ани, *Зодчий*, № 34, 1905, с. 369–374.

ծում աստիճանավոր կտրվածք է ունեցել, իսկ արևմտյան զանգվածեղ զույգ որմնամույթերին կցված են եղել կիսասյուներ: Եկեղեցու միակ մուտքը եղել է արևմուտքից, իսկ հյուսիսային, հարավային ու արևելյան ճակատներն ունեցել են ճարտարապետական եռանկյունաձև խորշեր:

Ներքին հարուստ հարդարանքի մասին էին վկայում հայերեն գրություններով որմնանկար քարաբեկորները (86 միավոր)[7], որոնք ևս ոչընչացվել են[8], բացառությամբ 4 բեկորի, որոնք այժմ պահվում են Պետական Էրմիտաժում: Ներքին տարածքի հարդարանքի մաս են կազմել նաև քանդակի առանձին դրվագներ՝ ներառյալ ավագ խորանի խորշի քանդակազարդ պսակը[9]:

Բախտաղեկի արտաքին հարդարանքը բնութագրվել է ինքնատիպ հորինվածքային լուծումով. նրա ճակատները ձևավորված են եղել բարակ դեկորատիվ զույգ սյուների վրա հենված որմնակամարներով: Յուրաքանչյուր ճակատում կենտրոնական կամարը եղել է մյուսներից զգալի բարձր, իսկ ճարտարապետական խորշերին համապատասխանող կամարի հատվածում՝ նեղ և ցածր: Առկա նյութի հիման վրա պարզ է դառնում, որ հարավային լուսամուտի շրջանակը[10], քիվերը, որմնակամարները, որմնասյուների խոյակներն ու խորշերի հովհարաձև վերջավորությամբ պսակները պատված են եղել երկրաչափական և գալարվող բուսական հյուսածո զարդատարրերով[11] (նկ. 6, 7):

Հարկ է նշել, որ այս նոր գեղարվեստական ոճն ի հայտ է եկել Զաքարյանների շրջանում և բնորոշ է բացառապես Անիին: Նման հարդարում ունեին այնպիսի եկեղեցիներ, ինչպիսիք են Տիգրան Հոնենցի (Ս. Գրիգոր, 1215 թ.) (նկ. 8), Աղջկաբերդի (1199–1207 թթ.) (նկ. 9) և Կուսանաց (Բեխենց) վանքի[12] եկեղեցիները, որոնք քիչ թե շատ կանգուն վիճակում են՝ հետևապես առավել հայտնի մասնագիտական շրջանակներին: Մինչդեռ Բախտաղեկի եկեղեցին, որն իր քանդակային հարդարանքով լրացնում է հուշարձանների այս խումբը, ուշադրությունից դուրս է մնացել:

---

7 *Краткий каталог Анийского музея,* Анийская серия № 1 (сост. Н. Я. Марр), Санкт-Петербург: Типография Императорской академии наук, 1906, с. 1–2.

8 Երբ Ն. Մառը 11 տարի ընդմիջումից հետո վերադառնում է Անի, հայտնաբերում է, որ որմնանկարներով պատված քարերը վնասվել են կամ մասամբ օգտագործվել որպես շինանյութ, իսկ 1892–1893 թթ. պեղված արձանագրությունների մի մասը ոչնչացվել է (**Марр Н. Я.,** Раскопки в Ани в 1904 году, *Известия Императорской Археологической комиссии,* вып. 18, 1906, с. 73):

9 **Марр Н. Я.**, *Ани…,* с. 54:

10 **Леонтьев К. А.,** Развалины города Ани…, с. 371, рис. 13; **Марр Н. Я.**, *Ани…,* табл. XVII, илл. 55.

11 *Краткий каталог…,* с. 3–6, 7–8. Խորշերի պսակների հարդարման այս ձևը սկիզբ է առել դեռ Բագրատունիների շրջանից (Շիրակավան, Անի):

12 **Կարապետյան Ս.**, *Անի 1050…,* էջ 203–204, նկ. 538–543:

Դեկորատիվ կամարաշարերի հորինվածքը սկիզբ է առնում դեռևս Զվարթնոցի (643–650 թթ.) տաճարի արտաքին հարդարանքով (նկ. 10): Հաջորդ՝ Բագրատունյաց շրջանում (10–11–րդ դդ.), այն դառնում է արտաքին դեկորատիվ ձևավորման պարտադիր տարր, որի լավագույն օրինակներն են Անիի Մայր տաճարը, Խծկոնքի և Մարմաշենի եկեղեցիները[13]: Գեղարվեստական հարդարման այս սկզբունքն Անիի 13–րդ դ. եկեղեցիների հարդարանքում ստանում է նոր մեկնաբանություն. կամարաշարը վերևից լրացվում է քանդակազարդ գոտիով[14], և միասին այս երկու տարրերն ավելի հանդիսավոր ու խոսուն են դարձնում եկեղեցիների ճակատները:

Խորհրդային տարիներին հարդարանքի այս ոճին են անդրադարձել Ստ. Մնացականյանն ու Տ. Իզմայլովան, որի արդյունքում էլ շրջանառության մեջ է դրվել «գեղաքանդակ ոճ» ձևակերպումը[15]: Այս տերմինը, անշուշտ, պայմանական է և, հավանաբար, հետագայում կվերանայվի, սակայն պարզաբանման համար նշենք, որ վերջինիս ձևակերպման համար հիմք են ծառայել տվյալ քանդակների (քանդակազարդ գոտու)՝ մի կողմից իրապաշտական բնույթը, և մյուս կողմից՝ դեկորատիվությունը, լույս ու ստվերի ընդգծված հակադրությունը, ինչպես նաև կենդանիների և թռչունների դիրքի և մարմնի ձևերի ճկունությունը, որոնք ներդաշնակ են կամարների կոր ուրվագծերին (նկ. 6, 7):

Անիի՝ վերը նշած եկեղեցիների հարդարանքում կիրառված քանդակազարդ գոտին խորհրդանշում է Դրախտային այգին կամ աշխարհը՝ բնակեցված կենդանիներով և թռչուններով, բայց նաև երբեմն հավելված մարդկային պատկերներով: Դրախտային այգին մարմնավորող քանդակազարդ գոտու ամենավաղ դրսևորումը հայկական միջնադարյան արվեստում ի հայտ է գալիս Զվարթնոցի (ս. Գրիգոր) տաճարի հարդարանքում (նկ. 10)՝ նախագաղափար դառնալով հայկական մի շարք եկեղեցիների արտաքին հարդարանքում նման գոտիների ձևավորման

13 **Казарян А. Ю.,** Фасадная аркатура армянских и грузинских церквей VII–XI вв. Структурные отличия и взаимосвязь традиций, *«Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային համաժողով (Երևան, 15–20 սեպտեմբերի, 2003 թ.)*, Զեկուցումների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2004, էջ 453–463:

14 Այստեղ տեղին է նաև նշել, որ բուսական զարդատարրերով ձևավորված շրջանցող զարդագոտին հայկական արվեստում առաջին անգամ ի հայտ է գալիս նորից Զվարթնոցում, հետագայում տեղ գտնում Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու (914–921 թթ.) հարդարման համակարգում (այսպես կոչված «որթազալարի գոտին»):

15 **Измайлова Т. А.,** Декоративное убранство двух анийских памятников начала XIII века (Церкви Тиграна Оненца и Бахтагеки), *Труды Государственного Эрмитажа*, т. 2, 1958, с. 159–166; **Мнацаканян Ст.,** Формирование анийской архитектурной школы в XII–XIV веках и проблемы «живописного стиля», *Вестник общественных наук*, № 3, 1987, с. 41–53.

համար: Նման վառ օրինակ է Աղթամարի ս. Խաչ եկեղեցու «որթագալարի» գոտին:

Ճիշտ է, Դրախտային այգու այլաբանության գաղափարը նոր չէր, և ընդհանուր առմամբ ուներ ավելի խոր՝ ուշ անտիկ և վաղքրիստոնեական արմատներ, սակայն հայկական միջնադարյան արվեստի տարբեր ժամանակահատվածներում այն ստեղծագործաբար վերիմաստավորվելով՝ տարբեր գեղարվեստական լուծումներ ստացավ: Անիի Զաքարյանների շրջանի եկեղեցիների՝ Տիգրան Հոնենցի, Բախտաղեկի և Աղջկաբերդի զարդագոտիների առանձնահատկությունն այն էր, որ Դրախտային այգու բուսական խորքի վրա ներկայացված են տարբեր կենդանիների և թռչունների (նկ. 9), այդ թվում՝ խառնածին էակների[16], իսկ Բախտաղեկի դեպքում՝ նաև մարդու պատկերներ[17]:

Զարդագոտու նկարագրությունն ու վերլուծությունը

Միայն լուսանկարների վերլուծությունը թույլ չի տալիս պատկերացում կազմելու Բախտաղեկի հարդարանքի ամբողջական համակարգի մասին, ինչպես նաև վերականգնելու քանդակների ճիշտ հերթականությունը: Այս պարագայում մեզ համար լրացուցիչ աղբյուր է Տիգրան Հոնենցի եկեղեցու հարդարանքը (նկ. 8) , քանի որ եկեղեցին կանգուն է, և քանդակի տարրերն էլ իրենց նախնական տեղում են:

Եկեղեցու արևմտյան միակ մուտքը պսակված է եղել քանդակազարդ հորինվածքով: Այստեղ եղել է «Բարեխոսության» հորինվածքը՝ Քրիստոսի, Աստվածածնի և Հովհաննես Մկրտչի պատկերներով[18] (նկ. 5): Վերջիններս ներկայացված են եղել միչև գոտկատեղը. հորինվածքի կենտրոնում Քրիստոսն է՝ ավելի խոշոր, դիմահայաց և օրհնողի դիրքով, Մարիամը՝ նրա ձախ, իսկ Մկրտիչը՝ աջ կողմերում, որոնք խնդրարկուի դիրք ընդունած՝ շրջված են դեպի Փրկիչը: Հայտնի է, որ «Բարեխոսությունը» բյուզանդական պատկերագրական թեմա է, ձևավորվել է 10-րդ դարից ոչ շուտ և արտահայտում է Աստծո առաջ բարեխոսության գաղափարը: Թեև այն հայկական արվեստում քիչ հանդիպող թեմաներից է, այնուամենայնիվ, արդեն 10-րդ դարի առաջին կեսին ի հայտ է գալիս Աղթամարի ս. Խաչ եկեղեցու խորանի որմնանկարում[19]:

16 **Կարապետյան Ս.**, *Անի 1050…*, էջ 184–187, նկ. 476–487:

17 **Марр Н. Я.**, *Ани…*, табл. XVIII, илл. 61; **Казарян А. Ю., Кукина Д. А., Медведева М. В.,** Дело «о командировании Н. Я. Марра в Русскую Армению для производства там археологических розысканий». Первый опыт раскопок в Ани, *Археологические вести*, № 37, 2022, с. 222, рис. 8.

18 **Марр Н. Я.**, *Ани…*, табл. XVII, илл. 53.

19 Բարեխոսության թեման հետագայում մեզ հայտնի է հայկական Տրապիզոնի ավետարանի մանրանկարի օրինակով (11-րդ դ.), Հաղպատի ս. Նշան եկեղեցու խորանի գմբեթարդում (10-րդ կամ 13-րդ դ.) և Կեչառիսի գլխավոր

Բացառիկ հայտնագործություն կարելի է համարել եկեղեցու մոդելը ձեռքերին պատվիրատուի ներկված խոշոր քանդակի ի հայտ գալը[20]: Ցավոք, այն ոչնչացվել է 1894–1904 թթ. միջակայքում: Հատկանշական է, որ Հ. Օրբելին թանգարանի նմուշների մեջ հիշատակում է նաև մեծ արձանից մնացած գլխազարդի բեկոր՝ հայտնաբերված 1892 թ.: Նա այդ բեկորը վերագրել է պատվիրատուի արձանին[21]: Միաժամանակ Ն. Մառի հաղորդած տեղեկության համաձայն՝ Անիի թանգարանում 1904 թ. պահվել է նաև 1892 թ. պեղումներից գտնված քանդակի գլուխ[22], որն, ամենայն հավանականությամբ, հենց վերոհիշյալ բեկորն էր: Նյութերի թերի լինելու պատճառով դեռևս հստակ չենք կարող ասել՝ ենթադրյալ *դոնատորական* հորինվածքում պատվիրատուն եղել է մեկը, թե երկուսը: Չի բացառվում, որ կարող էին լինել երկու պատկերներ՝ հաշվի առնելով, որ ինչպես Բագրատունյաց, այնպես էլ Զաքարյանների շրջանում պատվիրատուներին ներկայացնող հորինվածքները բաղկացած էին եկեղեցու մոդելով զույգ ֆիգուրից (Սանահին, Հաղպատ, Հառիճավանք, Դադիվանք):

Արտաքին զարդագոտու՝ մեզ հայտնի բեկորներին եղել են հետևյալ պատկերները՝

1.1 Երկու բեկոր, որոնք եղել են եկեղեցու ճակատներով անցնող զարդագոտու ձախից եզրավորող հատվածները: Առաջին բեկորին նապաստակին կտցահարող գիշատիչ թռչուն (արծիվ) է[23]՝ որմնակամարի աղեղի ձախ մասից վեր: Թռչունը և նրա տակ գտնվող նապաստակն ուղղված են դեպի ձախ և պատկերված են հորիզոնական դիրքով: Հորինվածքը ծավալվում է շատ ազատ, քանդակի առանձին հատվածներ, օրինակ՝ նապաստակի ականջները, դուրս են գալիս հորինվածքի շրջագծից:

1.2 Երկրորդ բեկորին ուղղահայաց կանգնած աղավնի է՝ երկար պոչը դեպի ներքև, վիզը թեքված է դեպի ձախ, կարծես մաքրում է ձախ թևի

եկեղեցու մուտքի ճակատակալի որմնանկար հարդարանքում (13–րդ դ. սկիզբ): Այն հատկապես սիրված է դառնում Վայոց Ձորի 13–րդ դ. վերջի և 14–րդ դ. սկզբի հուշարձաններում, օրինակ՝ Մոմիկի խաչքարերը, Սպիտակավոր եկեղեցու բեմառէջքը (**Հակոբյան Զ.,** Վայոցձորյան քանդակի բյուզանդական պատկերագրական աղերսները (XIII դ. երկրորդ կես – XIV դ. առաջին կես), *«Մոմիկ-750», Հոբելյանական գիտաժողով՝ նվիրված Մոմիկի ծննդյան 750-ամյակին*, Զեկուցումների ժողովածու, Երևան, «Գիտություն», 2011, էջ 70–74).

20 *Краткий путеводитель…,* с. 31: Այստեղ Հ. Օրբելին նշում է, որ պահպանվել է լուսանկարը:

21 Каталог…, с. 127–128.

22 **Марр Н. Я.,** Раскопки в Ани в 1904 году…, с. 89.

23 **Марр Н. Я.**, *Ани…,* табл. XVIII, илл. 60; **Лошкарева Е. А.,** Орнаменты и рельефы…, с. 34, илл. 3.

փետուրները[24]: Պահպանվել է կամարի աղեղի ստորին ձախ հատվածի շատ փոքր մասը և հորինվածքի ուղղահայաց շրջանակը, որը պատված է կամարի հարդարանքը կրկնող բուսական զարդանախշով:

1.3 Կամարաշարի զարդագոտու աջակողմյան եզրային մի բեկորի վրա պահպանվել է կամարի աղեղի աջ մասը, որից վերև հորիզոնական դիրքով «թառած» է երկար պոչով մի թռչուն, նրանից աջ՝ ուղղահայաց, կանացի դեմքով ֆանտաստիկ թռչուն՝ հուշկապարիկ[25]:

Հաջորդ բեկորները կազմել են գոտու այլ հատվածների մասեր.

2.1 Երկու բեկոր՝ մեկական թռչնի պատկերով, հորիզոնական դիրքով, գլուխները կոտրված[26]:

2.2 Թռչնի քանդակ՝ ուղղված դեպի աջ, որի ոտքերի և իրանի ստորին մասը չի պահպանվել[27] (նկ. 6, վերևի ձախ բեկորը):

2.3 Կամարների միջև ուղղահայաց դիրքով քանդակված՝ միմյանց մեջքով, իսկ գլխով դեպի իրար ուղղված զույգ թռչուններ[28]: Պահպանվել են կամարների աղեղների ստորին մասերը:

2.4 Հորիզոնական դիրքով դեմդիմաց կանգնած զույգ թռչուններ՝ կտուցների մեջ օղակ պահած[29]: Ձախ թռչունի վզին ժապավեն է՝ դեպի ներքև իջնող ծայրերով, իսկ աջի վզին՝ օղակ:

2.5 Կամարի աղեղի ձախ կողմում՝ դեպի ձախ ուղղված՝ քանդակված է ուղղահայաց դիրքով կանգնած թռչուն՝ երկար պոչը դեպի վեր, գլուխը չի պահպանվել: Իսկ աջ կողմում դեպի աջ նայող ուղղահայաց դիրքով թռչնի պատկեր է՝ կամարների արանքում (երևում է հաջորդ կամարի աղեղի միայն փոքր հատվածը): Առանձնանում է դեպի վեր ձգված երկար պոչը՝ պատված հինգ ալիքաձև զարդանախշով[30] (նկ. 6, ստորին երկու բեկորները):

Թռչունների պատկերներն աչքի են ընկնում դեկորատիվ-հարթային կատարմամբ. դա դժվարացնում է նրանց տեսակի որոշման հարցը: Նրանց մարմինները կամ հարթ են, կամ պատված խոր կլոր ակոսներով, կամ ձկան թեփուկներ հիշեցնող նախշով, պոչերն ու թևերն ընդգծված են խիստ սխեմատիկ զուգահեռ գծերով (բացառությամբ մեկի), իսկ վզի փետուրները պատկերված են կաթիլաձև, խոր ակոսով նախ-

24 **Сычев Н. П.,** Анийская церковь…, табл. II, илл. 2.

25 **Лошкарева Е. А.,** Орнаменты и рельефы аркатуры церкви св. Григория (Бахтагека или Хачута) в контексте декора анийских церквей начала XIII в., Вопросы всеобщей истории архитектуры, вып. 15, 2020, с. 35, илл. 4.

26 **Лошкарева Е. А.,** Орнаменты и рельефы…, с. 37, илл. 7, с. 34, илл. 3.

27 **Марр Н. Я.**, *Ани…,* табл. XVIII, илл. 62.

28 **Марр Н. Я.**, *Ани…,* табл. XVIII, илл. 59; **Лошкарева Е. А.,** Орнаменты и рельефы…, с. 34, илл. 3, с. 35, илл. 4.

29 **Сычев Н. П.,** Анийская церковь…, табл. III, илл. 1; **Лошкарева Е. А.,** Орнаменты и рельефы…, с. 37, илл. 7.

30 **Марр Н. Я.**, *Ани…,* табл. XVIII, илл. 57.

շերի տեսքով: Ամենագլխավոր առանձնահատկությունը թևերի վերին հատվածում շրջանաձև նախշի առկայությունն է՝ պատված նույն զարդանախշերով, ինչ մարմինը: Թռչունների թևերի պատկերման այս ձևն ի հայտ է գալիս հայ քանդակագործության մեջ Զաքարյանների դարաշրջանում:

Քանդակային գոտում եղել են նաև կենդանիների պատկերներ, որոնցից հայտնի են երկուսը.

3.1 Կամարաշարի զարդագոտու ձախ եզրային բեկորի վրա ուղղահայաց դիրքով քանդակված է գլուխը դեպի աջ թեքած առյուծ, որը ստորին վերջույթով հենվում է կամարի աղեղին: Առջևի վերջույթներից աջը կպած է աղեղին, իսկ ձախը ծալված է[31]: Ընդգծված են աչքերը, քիթը և դունչը, իսկ բաշը շատ պայմանական տեսք ունի:

3.2 Զարդագոտու աջ եզրային բեկորի վրա հորիզոնական դիրքով կանգնած գիշատիչ կենդանի է (գայլ, շուն)՝ գլխով դեպի աջ, վերջույթներով հենվել է կամարի աղեղին, պոչը պատկերված է երկու թաթերի արանքում[32]: Շեշտված են միայն աչքերը և առջևի թաթերի եզրերը:

Ելնելով այս երկու կենդանիների պատկերման նույն սկզբունքից՝ չի բացառվում, որ նրանք եղել են միևնույն գոտու վրա:

Պեղումներից բացվել են նաև ճակտոնի եռանկյունաձև քանդակազարդ քարեր՝ վրան ծաղկած խաչի պատկերներով (նման քարերը նույնպես բնորոշ են Զաքարյանների շրջանին)[33], արևային ժամացույց[34], որը, հավանաբար, եղել է հարավային պատին, ինչպես ընդունված էր միջնադարյան եկեղեցական ճարտարապետության մեջ: Եկեղեցու առանձին հատվածներ արտաքուստ նաև ներկված են եղել. երևույթ, որ բնորոշ էր ինչպես Բագրատունյաց շրջանի Անիի եկեղեցիներին, այնպես էլ Զաքարյանների շրջանի հուշարձաններին:

Բացի վերը թվարկածներից՝ գրականության մեջ հիշատակվում են նաև.

4.1 Թագակիր խառնածին էակի (Ն. Սիչովի համաձայն՝ կենտավրոսի) կոպիտ մշակված պատկերը խաղողի որթի ներքո[35]: Չնայած Ն. Սիչովն այս պատկերը բնութագրել է որպես կենտավրոս, բայցևայնպես արդեն իսկ լավ պատկերացնելով հայկական միջնադարյան, հատկապես 13–

31 **Сычев Н. П.,** Анийская церковь…, табл. I, илл. 2; **Лошкарева Е. А.,** Орнаменты и рельефы…, с. 36, илл. 5.

32 **Сычев Н. П.,** Анийская церковь…, табл. II, илл. 1; **Марр Н. Я.**, *Ани…,* табл. XVIII, илл. 58.

33 **Орбели И. А.,** Колокол с анийскими орнаментальными мотивами XII–XIII веков, *Записки Восточного Отделения Императорского Русского Археологического Общества*, т. 20, 1912, с. 024, рис. 3; **Казарян А. Ю., Кукина Д. А., Медведева М. В.,** Дело «о командировании…, с. 221, илл. 6.

34 **Марр Н. Я.**, *Ани…,* табл. XVII, илл. 54.

35 **Сычев Н. П.,** Анийская церковь…, с. 214.

րդ դ. քանդակում առասպելական կենդանիների և դրանց պատկերագրությունը, որում կենտավրոսի օրինակ հայտնի չէ, համարձակվում ենք առաջ քաշել այն տեսակետը, որ դա, հավանաբար, թագակիր սֆինքսի պատկեր է, ինչպես, օրինակ՝ Գեղարդում, Մակարավանքում և Հառիճում:

4.2 Եկեղեցու արտաքին հարդարանքի քարե մոդելը, որը գտնվել է ինչ-որ կենդանու թաթերի մեջ[36]: Ն. Մառը հիշատակում միայն եկեղեցու բարձրաքանդակ մոդելը[37]:

4.3 Եկեղեցու ներքին հարդարանքի եզակի տարր է դիտարկվել դուրս պրծած աչքերով և կոպիտ մշակմամբ մարդկային գլխի դրվագը, որը, ըստ Ն. Սիչովի, տեղադրված է եղել ներքին որմնամույթի խոյակից վեր[38]:

4.4 Բախտաղեկի եկեղեցու բակում պեղումների արդյունքում գտնվել են նաև 10-րդ և 12-13-րդ դդ. խաչքարեր[39]՝ ներառյալ Անիում ամենավաղ թվագրություն ունեցող խաչքարը (952/983 թթ.)[40]:

Բագրատունյաց շրջանի խաչքարերի առկայությունը, շինարարական արձանագրության և պատմական տեղեկությունների բացակայությունը հանգեցրել են նրան, որ եկեղեցու կառուցման ժամանակի վերաբերյալ կարծիքները վերջնական չեն[41]: Մասնագետների հիմնական խումբն այն թվագրում է Զաքարյանների շրջանով՝ միաժամանակ կարծիք հայտնելով, որ այն վերակառուցվել կամ վերանորոգվել է: Ընդ որում՝ դեռևս անորոշ է, թե արդյոք Բախտաղեկը այսպես կոչված «գեղաքանդակ ոճի» խմբի մյուս եկեղեցիներից ամենավաղ, թե՞ ամենաուշ կառույցն է (այստեղ հատկապես ելակետային է Տիգրան Հոնենցի թվակիր եկեղեցին): Այս հարցին ավելի հանգամանալից կերպով կանդրադառնանք մեր հետագա ուսումնասիրություններում, քանի որ պահանջվում է լրացուցիչ և համապարփակ քննություն: Այնուհանդերձ, ցանկանում ենք ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի, որը կարող է օգտակար լինել թվագրության հարցում: Ելնելով արխիվային լուսանկարներից՝ բեմի ճակատի արձանագրությունը նման է Հառիճի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու (1201 թ.) արևելյան ճակատի քիվի արձանագրությանը[42] և կատարման եղանակով տարբերվում է մյուս՝ նվիրատվական արձանագրությունից: Այսինքն՝ այս փուլում կարելի է եկեղեցին թվագրել 12-րդ դ. վերջով և 13-րդ դ. սկզբով՝ չբացառելով, որ այն ավելի ուշ շրջանում վերանորոգվել է:

---

36 **Леонтьев К. А.,** Развалины города Ани..., с. 371.

37 *Краткий каталог...,* с. 2.

38 **Сычев Н. П.,** Анийская церковь..., с. 214.

39 **Орбели И. А.,** Колокол..., с. 024, рис. 2, с. 026, с. 030, рис. 9, с. 032, рис. 11.

40 *Краткий каталог...,* табл. VI, илл. 1.

41 **Лошкарева Е. А.,** Орнаменты и рельефы..., с. 31.

42 Շնորհակալություն ենք հայտնում պ.գ.թ., վիմագրագետ Ա. Հարությունյանին՝ խորհրդատվության և պարզաբանումների համար:

Եզրակացություն

Բախտաղեկի եկեղեցու արտաքին քանդակային հարդարանքը պատկանում է հուշարձանների գեղարվեստական ձևավորման այն առանձնահատուկ ոճին, որն ի հայտ եկավ Անիում 12–րդ դ. վերջին ու 13–րդ դ. առաջին կեսին և այլևս չկրկնվեց հետագայում Հայաստանի այլ հատվածներում կառուցված եկեղեցիների հարդարանքում: Իր բացառիկ քանդակներով ու որմնանկար դրվագներով Բախտաղեկի եկեղեցին կարևոր օղակ է հայկական ճարտարապետության ու արվեստի հերթական ծաղկման՝ Զաքարյանների դարաշրջանի հուշարձանների գեղարվեստական ոճն ուսումնասիրելու հարցում, ինչպես նաև Անի–ի նշված խմբի եկեղեցիների համակարգման և թվագրման հարցում: Բախտաղեկի եկեղեցու քանդակային հարդարանքի տեսական վերականգնումը և վերլուծությունը խիստ կարևոր են ոչ միայն տվյալ հուշարձանի կերպարն ամբողջացնելու, այլև հատկապես ժամանակաշրջանի գեղարվեստական միտումներն ու քանդակային արվեստին առնչվող մի շարք հարցեր պարզաբանելու տեսանկյունից:

THE SCULPTURAL DECORATION OF THE CHURCH OF BAKHTAGHEK EXCAVATED IN ANI IN 1892

ZARUHI HAKOBYAN
PhD in Art History
Yerevan State University
State Academy of Fine Arts of Armenia

DIANA GRIGORYAN
Art Historian
History Museum of Armenia

Summary

The paper examines the relief fragments of Bakhtaghek (St. Gregory or Khachut) Church once forming part of its external sculptural band known as the "Heavenly Garden". These fragments were unearthed during the first season of the Ani archaeological excavations in 1892. At present there are only a few architectural fragments from the church preserved in the site. Some pieces disappeared between 1894 and 1904. Other items were destroyed by the soldiers of the Turkish army. The existing materials relating to the church comprise only some archival photographs as well as the descriptions of Nikolay Marr and Joseph (Hovsep) Orbeli with a couple of short articles. All the documented fragments are of great value. The reconstruction of Bakhtaghek Church, more exactly, its sculptural band, acquires a new meaning and significance in the context of the decoration style of a group of Ani churches of the early 13th century (Tigran Honents (St. Gregory), Akhjkabert and Kusanats) inherent only within the architectural school of Ani.

Keywords: Ani, Bakhtaghek, Khachut, St. Gregory, Zakarians (Zakarids), "artistic style", Joseph (Hovsep) Orbeli, Nikolay Marr

СКУЛЬПТУРНОЕ УБРАНСТВО РАСКОПАННОЙ В 1892 ГОДУ В АНИ ЦЕРКВИ БАХТАГЕК

ЗАРУИ АКОПЯН
канд. искусствоведения
Ереванский государственный университет
Государственная академия художеств Армении

ДИАНА ГРИГОРЯН
искусствовед
Музей истории Армении

Аннотация

В статье рассматриваются рельефные фрагменты церкви Бахтагек (св. Григория или Хачута), которые были раскопаны в первый сезон Анийской археологической кампании и составляли часть скульптурного пояса «Райского сада» церкви. Часть раскопанных в 1892 г. фрагментов внешней декорации была утеряна в период между 1894–1904 гг., остальная же часть была уничтожена в 1918 г. вторгшимися в Ани турецкими войсками. Из материалов касательно указанной церкви сегодня нам доступны архивные фотографии археологической кампании, а также описания Н. Марра и И. Орбели и пару статей. Задокументированные и описанные в свое время фрагменты церкви сегодня имеют большую ценность. Реконструкция церкви Бахтагек, в особенности ее скульптурного пояса, сегодня приобретает новый смысл и значение, так как данный стиль внешнего убранства характеризует группу Анийских церквей начала XIII в. (Тигран Оненц (св. Григорий), Ахчкаберд и Кусанац) и не встречается за пределами школы Ани.

Ключевые слова: Ани, Бахтагек, Хачут, св. Григорий, Закаряны/Захариды, «живописный стиль», Иосиф Орбели, Николай Марр

Գրականության ցանկ

1. *Դիվան հայ վիմագրության, պրակ 1, Անի քաղաք* (կազմ.՝ Հ. Ա. Օրբելի), Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1966:
2. **Թորամանյան Թ.,** *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության*, Երևան, ԵՊՀ հրատ., 2013:
3. **Կարապետյան Ս.,** *Անի 1050*, Երևան, «Բյուրակն» տպարան, 2011:
4. **Հակոբյան Զ.,** Վայոցձորյան քանդակի բյուզանդական պատկերագրական աղերսները (XIII դ. երկրորդ կես – XIV դ. առաջին կես), *«Մոմիկ-750», Հոբելյանական գիտաժողով՝ նվիրված Մոմիկի ծննդյան 750-ամյակին,* Զեկուցումների ժողովածու, Երևան, «Գիտություն», 2011, էջ 65–80:
5. **Измайлова Т. А.,** Декоративное убранство двух анийских памятников начала XIII века (Церкви Тиграна Оненца и Бахтагеки), *ТГЭ*, т. 2, 1958, с. 159–166.
6. **Казарян А. Ю.,** Фасадная аркатура армянских и грузинских церквей VII–XI вв. Структурные отличия и взаимосвязь традиций, *«Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային համաժողով* (Երևան, 15–20 սեպտեմբերի, 2003 թ.), Զեկուցումների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2004 թ., с. 453–463.
7. **Казарян А. Ю., Кукина Д. А., Медведева М. В.,** Дело «о командировании Н. Я. Марра в Русскую Армению для производства там археологических розысканий». Первый опыт раскопок в Ани, *Археологические вести*, № 37, 2022, с. 214–227.
8. *Каталог Анийского музея древностей*, вып. 1, Анийская серия № 3 (сост. И. А. Орбели), Санкт-Петербург: Тип. Импер. академии наук, 1910.
9. *Краткий каталог Анийского музея*, Анийская серия № 1 (сост. Н. Я. Марр), Санкт-Петербург: Типография Императорской академии наук, 1906.
10. *Краткий путеводитель по городищу Ани*, Анийская серия № 4 (сост. И. А. Орбели), Санкт-Петербург: Тип. Импер. академии наук, 1910.
11. **Леонтьев К. А.,** Развалины города Ани, *Зодчий*, № 34, 1905, с. 369–374.
12. **Лошкарева Е. А.,** Орнаменты и рельефы аркатуры церкви св. Григория (Бахтагека или Хачута) в контексте декора анийских церквей начала XIII в., *Вопросы всеобщей истории архитектуры,* вып. 15, 2020, с. 28–43.
13. **Марр Н. Я.,** Новые материалы по армянской эпиграфике, *Записки*

Восточного Отделения Императорского Русского археологического общества, т. 8, 1894, с. 69–103.

14. **Марр Н. Я.,** Раскопки в Ани в 1904 году, *Известия Императорской Археологической комиссии*, вып. 18, 1906, с. 73–94.
15. **Марр Н. Я.**, *Ани. Книжная история города и раскопки на месте городища* (переизданное), Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, 2011.
16. **Медведева М. В.,** Армения в работах предшественников К. Х. Кушнаревой: судьба архива академика Н. Я. Марра, *Записки Институт истории материальной культуры Российской академии наук*, № 27, 2022, с. 27–39.
17. **Мнацаканян Ст.,** Формирование анийской архитектурной школы в XII–XIV веках и проблемы «живописного стиля», *ВОН,* № 3, 1987, с. 41–53.
18. **Орбели И. А.,** Колокол с анийскими орнаментальными мотивами XII–XIII веков, *Записки Восточного Отделения Императорского Русского Археологического Общества*, т. 20, 1912, с. 023–039.
19. **Сычев Н. П.,** Анийская церковь, раскопанная в 1892 г., *Христианский Восток*, т. 1, вып. 2, 1912, с. 212–219.

Նկարների ցանկ

1. Ամի, Բախտաղեկի եկեղեցու տեղը (մնացորդներ), լուս.՝ Ս. Կարապետյան, 2010 թ. (ՀՃՈՒՀ հիմնադրամի արխիվ)
2. Բախտաղեկի եկեղեցու պեղումները (ФО НА ИИМК РАН: Ф. 23. Отп. Q 738–03)
3. Բախտաղեկի եկեղեցու վերակազմությունը ըստ Թ. Թորամանյանի (ըստ՝ **Марр Н. Я.**, *Ани. Книжная история города и раскопки на месте городища* (переизданное), Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, 2011, табл. XV, илл. 46–47)
4. Բախտաղեկի եկեղեցու հատակագիծը (ըստ՝ **Леонтьев К. А.,** Развалины города Ани, Зодчий, N 34, 1905, с. 371, рис. 10)
5. Բախտաղեկի եկեղեցու մուտքի ճակատակալը, լուս.՝ Ա. Վրույրի (ՀՃՈՒՀ արխիվ):
6. Բախտաղեկի եկեղեցու արտաքին քանդակազարդ բեկորները (Մ. Մազմանյանի արխիվ, այժմ պահվում է ՀՃՈՒՀ արխիվում):
7. Բախտաղեկի եկեղեցու քանդակազարդ բեկորները (ФО НА ИИМК РАН: Ф. 23. Отп. Q 738–07)
8. Տիգրան Հոնենցի (Ս. Գրիգոր) եկեղեցու հյուսիսային ճակատի քանդակային զարդագոտու դրվագ, լուս.՝ Դ. Գրիգորյանի, 2018 թ.:
9. Աղջկաբերդի եկեղեցու արևմտյան ճակատի անկյունային հատ-

վածը զարդագոտու հետ, լուս՝ Հ. Կյուրեղյանի, 2014 թ.:
10. Զվարթնոցի զարդագոտու դրվագի վերակազմությունը (ըստ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատ–մության, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 106)

Ընդունվել է՝ 20.07.2024
Գրախոսվել է՝ 21.07.2024
Հանձնվել է տպ.՝ 03.03.2025



1

2



3



4

5

6

7

8

9

10